Doi:10.54503/0135-0536-2022.2-34

ՀԱՃԸՆԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ. ՊԱՐՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ*

ՍՈՒՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Բանալի բառեր՝ Կիլիկիա, Հաճըն, հերոսամարտ, ինքնավարություն, տնտեսական շահեր, ինքնապաշտպանություն, պարտություն, ֆրանսիական զինվորական իշխանություն:

Նախաբան

1375 թ. Կիլիկիայի հայկական թագավորության անկումից հետո Հաճընին տիրացավ Օսմանյան Թուրքիան: Եղեռնի տարիներին տարագրության ու ջարդերի ենթարկվեցին նաև հաճընցիները: 1918 թ. հոկտեմբերի 30-ին՝ Մուդրոսի զինադադարից հետո, Կիլիկիան զինագրավված ֆրանսիական ուժերի ղեկավար գնդապետ Էդուարդ Բրեմոնը[1], ժամանելով Կիլիկիա, հայտարարեց, որ հայերը պետք է «տեր դառնան իրենց երկրին: Մենք պիտի առաջնորդենք զիրենք, մինչև որ անոնք աճին և սկսին ինքզինքնին կառավարելու գործին հաջողիլ»[2] և «պէտք է այժմէն պատրաստէք վարչագէտ մարդիկ երկրին վարչութիւնը ձեռք առնելու համար»[3]: Կիլիկիահայերը, հավատալով այդ խոստումներին, 1919 թ. սկսեցին վերադառնալ և վերականգնել հայրենի օջախները: Մարտ ամսվա ընթացքում շուրջ 250 ոստիկաններով Հաճընն է մտնում ոստիկանական սպա Պողոս Թուրսարգսյանը, որին հետևում են 300 հայ ընտանիքներ: Մարտի 29-ին հաճընցիները, հեռագրատան տնօրեն Համբարձում Էվիխանյանի ատենապետությամբ, 11 հոգուց բաղկացած Ազգային միություն են կազմում: Քաղաքի թուրք կառավարիչի փոխարեն մայիսի 7-ին նշանակվում է Արմենակ Քերեճյանը: Դա առաջացնում է Կիլիկիայի 60 հազար թուրքերի դժգոհությունը: Նրանք առավել աշխուժացան, երբ անգլիացի գեներալ Դեյվիդ Մեջը, ֆրանսիացի գնդապետ Ժերար Փիոփափն ու Սսի ֆրանսիական կառավարիչ կապիտան Թեյարդան հայտնեցին, որ զինուժի պակասության պատճառով անհնար է Հաճընը ներառել դրավման գոտու մեջ և կայազոր թողնել[4]:

1920 թ. Կիլիկիայում ապրում էր ավելի քան 150 հազար հայ: Սակայն ֆրանսիական վարչությունը որևէ գործուն միջոց չձեռնարկեց նրանց ան-

---

** Ներկայացվել է 11. III. 2022 թ., գրախոսվել է 23. III. 2022 թ., ընդունվել է տպագրության 07. VI. 2022 թ.:*

[1] Գնդապետ Էդուարդ Բրեմոնը 1919 թ. հունվարի 1-ից 1920 թ. սեպտեմբեր եղել է Կիլիկիայի ֆրանսիական վարչական վերահսկողության ղեկավարը:

[2] Իզմիրլեան. 1964, 210:

[3] «Կիլիկիա» (Ադանա), 03. VI. 1919:

[4] Գասպարյան. 2005, 178:

վտանգությունն ապահովելու համար: Ավելին, Թուրքիայի մասնատմանը ձեռնամուխ եղած Անգլիային հակառակ, Ֆրանսիան ձգտում էր պահպանել նրա ինքնուրույնությունը: Պատճառը ֆրանսիական կապիտալի շահագրգռվածությունն էր և գերիշխող դիրքը թուրքական տնտեսությունում: Օսմանյան պարտքի 60,31 տոկոսը բաժին էր ընկնում Ֆրանսիային (Անգլիայինը՝ 14,9, Գերմանիայինը՝ 14,19)[5]: Ֆրանսիան առավելություն ուներ նաև ներդրած կապիտալներով: Դրանք կազմում էին 50,58 տոկոս (Անգլիայինը՝ 14,36, Գերմանիայինը՝ 35,06)[6]: Ինչպես նշել է Բեռլինում թուրքական դեսպան Մուխթար փաշան, «Ֆրանսիայի քաղաքականությունը Թուրքիայի նկատմամբ պայմանավորված էր նրա դրամատերերի բուռն ցանկություններով»[7]:

Ֆրանսիայի շահերը Կիլիկիայում ընդգրկում էին նաև կրթամշակութային ոլորտները (Ֆրանսերենը դարձել էր երկրորդ լեզու, 1914 թ. Թուրքիայում գործում էին 500 ֆրանսիական դպրոցներ)[8]: 1914–1918 թթ. Համաշխարհային պատերազմը չխարխլեց այդ համերաշխության հիմքերը: Հենց այդ պատճառով Ֆրանսիան «մեզ խաբեց, խոստանալով Կիլիկիան կառավարել իբրև հայկական երկիր մը, մեր կեանքին պահպանութիւնը երաշխաւորելով, ու յետոյ, թողլով որ 20.000 հայեր ջարդուին իր աչքին առջև»[9]: Տեղերում իշխանության ղեկին մնացին թուրք պաշտոնյաները, որոնց «գերակշռող մասը մոլի իթթիհատական գործիչներ էին»[10]: Թուրք-քրդական զինված խաժամուժը և քեմալիստները շարունակեցին երիտթուրքերի հայաջինջ քաղաքականությունը: 1920 թ. սկզբներին ֆրանսիական զորքերը սկսել էին դուրս գալ Կիլիկիայից և այն (ներառյալ՝ Հաճընը) հանձնել Թուրքիային[11]: Քեմալականների առաջին թիրախը դարձավ հայաբնակ Մարաշը[12]: 1920 թ. հունվարին նրանք ներխուժեցին քաղաք: Հայերը թեև ինքնապաշտպանության դիմեցին, սակայն ընդհանուր հրամանատարության բացակայության, զենք-զինամթերքի անբավարարության և այլ պատճառներով պարտվեցին. «Մարաշի դէպքերուն կարմիր և դժոխային ոսկեբբուկը[13] կազմող դրուագը ֆրանսական զօրքերուն դաւաճանական նահանջն է, որ ցարդ անբացատրելի կը մնայ, ամբողջ աշխարհի ու նոյնիսկ Կիլիկիոյ վարիչներուն համար, որոնք այս ամէնը «ահաւոր սխալի մը կը վերագրեն և անոր պատասխանատուները կը փնտռեն ...»[14]:

---

[5] Ллойд Джордж. 1957, 402.

[6] «Новый Восток» (М.), 1923, 475–476.

[7] Боев. 1964.

[8] Кемаль Мустафа. 1929, 145–146; *Սաֆրաստյան. 2019, 67:*

[9] *Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 430, ց, 1, գ. 817, թ. 19–39:*

[10] *Սահակյան. 1970, 127:*

[11] *Ավելի ուշ՝ 1921 թ. մարտի 9-ին, կնքված ֆրանս-թուրքական համաձայնագրով Կիլիկիան ամբողջությամբ հանձնվում է Թուրքիային:*

[12] *Մարաշում տեղի ունեցած ցավալի իրադարձությունների մասին առավել հավաստի և անկողմնակալ նկարագրությունը տրված է անմիջական ականատես, Մարաշի ֆրանցիսկյան վանքի վանահայր Մատերն Մյուրեի «Մարաշի ջարդը 1920 թ. փետրվարին» գրքույկում* (Materne. 1921)*:*

[13] *Բբուկ արևմտահայերենում փետուրին էին ասում:*

[14] *Նաթանեան. 1951:*

«Մարաշում սխալ հասկացողութեան մը արդիւնքում»[15] Թուրքերը սրի քաշեցին 13.600 հայի և ավերեցին քաղաքը[16]: Մարաշից հետո Թուրքերը մարտին հարձակվեցին Հաճընի վրա, որտեղ նրանց դեմ պաշտպանությունը կազմակերպված բնույթ կրեց և «պէտք է պանծացուին գալիք սերունդներուն օրինակ ըլլալու համար»[17]: Սակայն Մարաշի աղետից հետո արդեն որոշակի է դառնում, որ Ֆրանսիան Կիլիկիան թողնելու է Թուրքերին, և նման դիվանագիտական խարդավանքների զոհը պետք է դառնար ոչ միայն Հաճընը, այլև ողջ Կիլիկյան Հայաստանը:

Հաճընի ինքնապաշտպանությունը

Հաճընի ութամսյա ինքնապաշտպանությանը, որ «կը յատկանշուի իր տեւողութեամբ, կազմակերպուածութեամբ եւ զինուորական հնարքներով»[18], պատմագիտության մեջ անդրադարձներ եղել են, սակայն դեռևս զգալի թվով սպիտակ էջեր ու պարզաբանման կարոտ հարցեր կան: Այն հայ ժողովրդի ազատագրական պայքարի հերոսական էջերից է, ինքնահաստատման ու դաժան գոյապայքարի խոսուն վկան:

Ինչպես ասվեց, Մարաշից հետո ֆրանսիական թուրքանպաստ քաղաքականության զոհը դարձավ Հաճընը, որը, ի տարբերություն Մարաշի, Այնթապի և Ուրֆայի, ամբողջովին թողնված էր սեփական բախտին: Հայերին պաշտպանելու համար ոչ մի ֆրանսիական զինվոր մուտք չէր գործել Հաճընն: 1918 թ. զինադադարից հետո հրաշքով կենդանի մնացած հաճընցիները, որոնք «կը փափաքին, որ այս երկիրը Ֆրանսայի իշխանութեան տակ իյնայ», ցնծությամբ սկսեցին վերադառնալ և, դրսևորելով անընկճելի կամք, շինարար ու ստեղծագործ իրենց բնույթի համաձայն, կարճ ժամանակում կարողացան ավերակների միջից բարձրացնել հարազատ քաղաքը, վերակենդանացնել հայրենի օջախները: Սակայն «հազիւ վերադարձած հայրենիք, միջկուսակցական պայքարը կը սկսէր իր աւերը գործել, ինչ որ մանաւանդ Հաճընի պարագային, ճակատագրական ազդեցութիւն պիտի ունենար»[19]:

Մարաշի հաջողությունից քաջալերված՝ քեմալականները տենդագին գործունեություն են ծավալում Հաճընը պաշարելու ուղղությամբ: Զգալով վերահաս վտանգը՝ տեղի հայերը, փաստաբան Կարապետ Զալյանի նախաձեռնությամբ, կազմեցին ինքնապաշտպանության բարձրագույն խորհուրդ (նախագահ՝ Հաճընի հոգևոր առաջնորդ Պետրոս Սարաճյան), որի հրամանով զորակոչվում են քաղաքի 15–60 տարեկան բոլոր տղամարդիկ: Պաշտպանության հրամանատար նշանակվեց Անդրանիկ Օզանյանի զինակից, սպա Սարգիս Ճեպեճյանը, տեղակալ՝ Արամ Թերզյանը: Կազմակերպվեց չորս վաշտ (հրամանատարներ՝ Կ. Օղուլլուքյան, Մ. Շիրրտմյան, Մ. Մանասյան, Վ. Ալթունյան) և 60 հեծյալից բաղկացած էսկադրոն (հրամանատար՝ Պ. Թերզյան): Բոլոր դիրքերն էլ լեռնային էին, որը բավական հեշտացնում էր ինքնապաշտպանության գործը: Ինքնապաշտպանության կենտրոնատեղի է դառնում Սբ. Աստվա-

---

[15] *ՀԱԱ, ֆ. 430, ց, 1, գ. 340, թ. 1–2:*
[16] *Հայոց պատմություն. 2010, 226, Արզումանյան. 1973, 419:*
[17] *Թէրզեան. 1956, 69:*
[18] *Ճերեճեան. 2022, 248:*
[19] *Յափուճեան. 1977, 584:*

ծածին եկեղեցին: Ստեղծվեցին պաշտպանություն ապահովող այլ մարմիններ ևս: Տղամարդկանց բաժանվեց 132 հրացան, հետագայում ևս՝ 300-ը և 200 ռումբ[20]: Հաճընը և շրջակայքը բաժանվեցին պաշտպանական 4 շրջանի, փորվեցին խրամատներ, կառուցվեցին դիրքեր ու այլ ամրություններ, քաղաքում պարետային ժամ սահմանվեց[21]: Այդ օրհասական պայմաններում, երբ Հաճընի կապն արտաքին աշխարհի հետ խզված էր, իսկ դրսից ակնկալվող օգնությունը՝ բացառված, հաճընցիները ստիպված էին անհավասար կռիվ մղել քեմալական գերակշիռ ուժերի դեմ:

Ֆրանսիայի զինվորական ներկայացուցիչները, որոնց «քաղաքական ուղղությունը երկիրը իսլամական քաղաքակրթությամբ կառավարելն էր»[22], բավարարվեցին հաճընցիներին մի քանի հարյուր հրացան տալով, բայց միաժամանակ թուրքերին տեղյակ պահեցին հայերի ինքնապաշտպանական քայլերի մասին: Շրջակայքի թուրքերն էլ, որոնց «ղեկավարում էին մեծ թվով սպաներ, ունեին լեռնային թնդանոթներ, գնդացիրներ և զինամթերքի ահագին պաշար»[23], «կհավաքվին, կզինվին և կսպասեն ճյունհալին՝ Հաճընո վրա հարձակվելու համար»[24] և ամեն րոպե հարձակման նշանի էին սպասում:

Մինչ այդ՝ 1919 թ. ամռան ընթացքում, շրջակա քեմալական գործիչները հայերի դեմ պայքարի կոչեր էին անում: Եվ ոչ միայն նրանք, որ «Ֆրանսացիներու քթին տակը սոսկալի պատրաստութիւններ տեսած են (մենք ալ գիտէինք, կ՚ըսէինք ու կարեւորութիւն չէինք տար) և թէ դեռ ի՞նչ պատահականութիւններ կախուած կան մեր գլխուն վրան»[25]: Նրանց էին միացել նաև շրջանի քուրդ ու չերքեզ առաջնորդները: Այդ ամենից տեղյակ ֆրանսիական իշխանություններն էլ քաջալերում էին քեմալականներին[26]:

1920 թ. փետրվարի 22-ին Ս. Ճեպեճյանը հավաստի աղբյուրներից տեղեկանում է՝ զգալի թվով թուրքական զորքեր են կենտրոնանում Հաճընի վրա հարձակվելու համար, և որ գավառի 60 հազարից ավելի թուրքերն էլ հրամանի են սպասում: Ինքնապաշտպանության խորհուրդը որոշում է այդ մասին տեղեկացնել գնդապետ Է. Բրեմոնին և Պետրոս Սարաճյանի գլխավորությամբ պատվիրակություն է (Հարություն Խաչատրյան, Շմավոն Փոսթոյան) ուղարկում Ադանա[27]: Նրանց առաջադրանքն էր՝ հանդիպել գնդապետ Է. Բրեմոնին և օգնություն խնդրել, Հաճընին օգնելու համար կամավորական ջոկատ ստեղծել, նաև ցանկացած արդյունքի մասին «հեռագրով հրահանգ տալ՝ դիմադրելու կամ նահանջելու»[28]:

Մարտի 7-ին պատվիրակությունը Սահակ կաթողիկոս Խապայանի ու Ազգային պատվիրակության լիազոր-ներկայացուցիչ Միհրան Տամատյանի հետ

[20] ՀԱԱ, ֆ. 408, ց. 1, գ. 142, թ. 13, նաև՝ Արամ Ասպետ. 1961, 205:
[21] Պողոսեան. 1942, 857:
[22] ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 817, թ. 19–39:
[23] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 546, թ. 17–19:
[24] Մատենադարան, Ա. Ալպոյաճյանի արխիվ, թղթ. 14, վավ. 29:
[25] ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 295, թ. 21–29:
[26] Մանջյան. 1991, 39:
[27] ՀԱԱ, ֆ. 408, ց. 1, գ. 124, թ. 1–2, Մատենադարան, Ա. Ալպոյաճյանի արխիվ, թղթ. 14, վավ. 29, թ. 2:
[28] Մատենադարան, Ա. Ալպոյաճյանի արխիվ, թղթ. 14, վավ. 29, թ. 3:

հանդիպում է Բրեմոնին և ռազմական օգնություն խնդրում: Վերջինս պատասխանում է, որ կարող է միայն զենք ու պարեն տրամադրել, եթե կամավորական խմբեր կազմվեն: Որոշ չափով զենք-զինամթերք տրամադրվում է, սակայն այն չի հասնում Հաճընն. ճանապարհին ընդհարում է տեղի ունենում Կարապետ Լաչինյանի զինատար խմբի ու դարանակալած թուրքերի միջև և ողջ ռազմամթերքը (40 բեռ) անցնում է չեթեների ձեռքը[29]: Մարտի 14-ին էլ Մ. Տամատյանի և Հաճընի պատվիրակության հետ հանդիպման ժամանակ Բրեմոնը հայտնում է, որ ավելորդ է անգամ խորհել օգնություն ուղարկելու մասին, ու հայ կամավորներին էլ արգելում է Հաճընն մեկնել[30]:

Անագորույն ճակատագրին դեմ հանդիման մնացած Հաճընի Ազգային խորհուրդը մարտի 14-ին հեռագիր է ուղարկվում Մ. Տամատյանին, որում ասվում էր. «... եթե օգնութիւն չը փութաք, Հաճընը կը ջնջուի երկրի վրայէն»: Փաստորեն, ռազմական որևէ օգնության հույս չունեցող հաճընցիները երկու ելք ունեին. ա) կազմակերպված նահանջել Սիս կամ բ) դիմել ինքնապաշտպանության, որը հավասարազոր էր «ժողովուրդը անձնասպանութեան մղելու»[31], այսինքն՝ գիտակցական մահվան: Իհարկե, ամբողջական շրջափակումից խուսափելու նպատակով գերադասելի էր նահանջելը: Այդպես էին մտածում հաճընցիների մեծ մասը: Դա է հաստատում նաև մարտի 14-ին Պ. Սարաճյանի՝ Հաճընի ինքնապաշտպանության բարձրագույն խորհրդին հղած «Քաղաքս վտանգէն զերծ պահելու համար բոլոր դիմումներս ապարդիւն մնացին. օգնութեան յոյս չի նշմարուիր: Ուստի, միակ միջոցը ... ժամ առաջ Սիս հասնելու աշխատեցէք»[32] բովանդակությամբ հեռագիրը: Իսկ հուշագիր Սոկրատ Թերզյանի ասելով՝ վերոհիշյալ հեռագիրը թվագրված է եղել մարտի 13-ով և այսպիսի բովանդակություն ուներ. «Կը ցաւիմ, որ բոլոր դիմումներս ապարդիւն մնացին: Ոեւէ տեղէ օգնութիւն մի սպասէք: Անմիջապէս նահանջեցէք Սիս»[33]:

Հաճընցիները որոշում են նահանջել Սիս և փրկվել ջարդերից: Սակայն Կիլիկիայի Ազգային խորհրդի անդամներն այլ մոտեցում ունեին Հաճընի պաշտպանության հարցին. «Կիլիկիայում բարձր քաղաքականութիւն ընդունողները հաճընցիներուն նահանջը կը նկատեին ոչ միայն նվաստութիւն, այլեւ այդ շրջանին նկատմամբ ազգային իրավունքներու ժխտում»[34]:

Այսպիսով, վերը նշված աղբյուրներում հիշատակված նույն հեռագիրը մի դեպքում թվագրված է մարտի 13–14-ին, իսկ մյուսում՝ միայն 13-ին: Սակայն Սարաճյանն իր հուշերում գրում է, թե հեռագիրն ուղարկված է մարտի 14-

---

[29] ՀԱԱ, ֆ. 408, ց. 1, գ. 124, թ. 1–2, Մատենադարան, Ա. Ալպոյաճյանի արխիվ, թղթ. 14, վավ. 29, թ. 12–13: Սփյուռքահայ հեղինակ Մ. Սեպուհի ասելով՝ զենք-զինամթերք տեղափոխող խմբին մատնել է էվերեկցի Արշակ Սեմիզյանը (տե՛ս Սեպուհ. 1960, 52):

[30] Մատենադարան, Ա. Ալպոյաճյանի արխիվ, թղթ. 14, վավ. 29, թ. 14, նաև՝ Յուշամատեան Մեծ Եղեռնի (1915–1965). 1965, 876:

[31] Իզմիրլեան. 1964, 270:

[32] Մատենադարան, Ա. Ալպոյաճյանի արխիվ, թղթ. 14, վավ. 29, թ. 16:

[33] Թէրզեան. 1937, 257:

[34] Իզմիրլեան. 1964, 270:

ին[35]: Այսինքն՝ կարելի է ենթադրել, որ հեռագիրը գրվել է 13-ին, բայց ուղարկվել՝ 14-ին: Սարաճյանի այս հեռագրից անմիջապես հետո Աղանայից ևս մի հեռագիր է ուղարկվում Հաճընն: Հեռագիր, որի բովանդակությունը հուշագիրների մոտ տարբեր է: Այսպես՝ Հաճընի ինքնապաշտպանության երկրորդ վաշտի հրամանատար Մեսրոպ Շիրտմյանի տարբերակում ասված է. «Ակէ առաջ Սարաճեանի ստորագրութիւնով եկած հեռագրին կարեւորութիւն մի տաք: Հաճընն ղրկուելիք բաւական ուժեր պատրաստուած են: Վստահ եղէք թէ ամէն պարագայի տակ դուք էք և դուք պիտի ըլլաք յաղթողը»[36]: Շիրտմյանի ասելով՝ այս հեռագիրը ստորագրված է եղել Մ. Տամատյանի ու «Հաճընի պատվիրակության» կողմից՝ առանց Սարաճյանի ստորագրության[37]: Իսկ ըստ Թերզյանի հեռագրի բովանդակությունն այսպիսին է. «Գաղթը ազգային արժանապատվութեան դէմ է: ... Կռիւը շարունակեցէք, քանի մը օրուան մէջ ձեզի 1200 հոգինոց օգնական ուժ պիտի հասնի: Օգնաւ ալ պիտի ղրկենք: 14 մարտի 1920 Մ. Տամատեան, Յարանուական պետեր, Հաճընի Հայր. միութիւն»[38]:

Ահա այս հեռագրի հիման վրա է, որ տեսական ժամանակ մամուլում[39] և, հատկապես, հուշագրական գրականության մեջ շրջանառվել է այն թյուր տեսակետը, թե Հաճընի ողբերգության մեջ մեղքի մեծ բաժին է ունեցել Կիլիկիայում Ազգային պատվիրակության լիազոր-ներկայացուցիչ Մ. Տամատյանը[40]: Հետագայում ևս Ս. Թերզյանը, Մ. Սեպուհը և նրանց ձայնակցող այլ հուշագիրներ, տուրք տալով կուսակցականությանը և հենվելով ոչ իրական փաստերի վրա, 6000 հաճընցիների կոտորածի համար պատասխանատու են համարել Մ. Տամատյանին:

Այդ ոչ ճիշտ տեսակետն, ավել կամ պակաս շեշտադրությամբ, կրկնվել է նաև հիմնախնդրին անդրադարձած որոշ ուսումնասիրողների մոտ: Այսպես. «Նույն օրը, – գրում է Ռ. Սահակյանը, – խաբվելով Բրեմոնի՝ իրեն հասցեագրված 1920 թ. մարտի 14-ի թվակիր նամակում արտահայտած այն կարծիքից, թե հաճընցիների «ամբողջական մեկնումը առանց կռվի Եվրոպայի առաջ իրենց համար պիտի ըլլա վնասակար», և որ «Հայաստանի բարձր համբավին տեսակետովը անհրաժեշտ է, որ այդ նահանջը չկատարվի»[41]: Մ. Տամատյանը, Ազգային միությունը և Հաճընի հայրենակցական միության անդամներն այսպիսի հեռագիր են ուղարկում հաճընցիներին:

---

[35] Մատենադարան, Ա. Ալպոյաճյանի արխիվ, թղթ. 14, վավ. 29, թ. 16: Սակայն Սարաճյանը հեռագրի տեքստը չի ներկայացնում: Դրա մասին տեղեկանում ենք Հ. Պողոսյանի և Հաճընի ինքնապաշտպանության մասնակից Ս. Թէրզեանի տեքստերից, որոնք, ի դեպ, զգալի տարբերվում են միմյանցից:

[36] Շ ի ր տ մ ե ա ն. 1974, 53:

[37] Շ ի ր տ մ ե ա ն. 1974, 53, Պ ո ղ ո ս ե ա ն. 1942, 652:

[38] Թ է ր զ ե ա ն. 1956, 258: Իսկ Կ. Իզմիրլյանը հուշերում գրում է, որ Մ. Տամատյանը Հաճընն հեռագիր էր ուղարկել իր և Պ. Սարաճյանի ստորագրությամբ [տե՛ս «Նոր Հաճընն» (Ադանա), 1966, 271]:

[39] «Կիլիկիա», 03. VI. 1919, 15. VI. 1919:

[40] Պ ո ղ ո ս ե ա ն. 1942, 652, Թ է ր զ ե ա ն. 1956, 257, Մ ա ն ջ յ ա ն. 1991, 96:

[41] Ս ա հ ա կ յ ա ն. 1970, 174:

Կիլիկիայի Ազգային խորհրդի անդամները, մասնավորապես՝ նրա նախագահ Մ. Տամատյանը, «թյուրիմացության մեջ ընկնելով է. Բրեմոնի կողմից, թե միջազգային առումով «Հայաստանի բարձր համբավի տեսակետովը անհրաժեշտ է, որ այդ նահանջը չկատարվի», քաղաքական անհեռատեսություն դրսևորելով, հեռագիր են հղում Հաճըն. «Գաղթը ազգային արժանապատվության դեմ է: Դուք հայու վայել և հաճընցիի քաջությամբ կռիվը շարունակեցեք, քանի մը օրվան մեջ ձեզի 1200 հոգիանոց օգնական ուժ պիտի հասնի: Օգնավ ալ պիտի ղրկենք: Ս. Սարգիսին բլուրին վրա ճերմակ խաչ մը շինեցեք, որպեսզի ծարները հոն նետե»[42]: Իհարկե, նման բովանդակությամբ հեռագիրը ոգևորում է հաճընցիներին, սակայն սպասված օգնությունն այդպես էլ չի լինում[43]: Այնուհետև Ռ. Գասպարյանը դժվարանում է բացատրել, թե ինչով է առաջնորդվել Տամատյանը, որ այդպիսի հեռագիր է ուղարկել, բայց, այնուամենայնիվ, այդ քայլը համարում է «քաղաքական լուրջ սխալ, որը ողբերգական հետևանքներ ունեցավ»[44]: Հետո էլ փորձելով որոշ չափով «մեղմել» Տամատյանի մեղքը՝ Ռ. Գասպարյանը նշում է՝ չի կարելի նաև վստահ այն կարծիքը հայտնել, որ դեպի Սիս նահանջը կապահովեր հաճընցիների փրկությունը, քանի որ այդ դեպքում նրանք Հաճընին զենք-զինամթերք տանող և օգնության հասնող կամավորականների նման զոհ կգնային ճանապարհին դարանակալած թշնամական ուժերին: Մի բան, որն ուղղակի հաստատում է այն իրողությունը, թե մարտի 13-ին Պ. Սարաճյանի հղված նահանջի ուղին բռնելու խորհուրդ պարունակող հեռագիրը հաճընցիները ստացել էին մարտի 14-ին, իսկ հաջորդ օրը քաղաքն ամբողջովին շրջափակվել էր քեմալական հրամանատար Կոզան օղլի Դողանի ջոկատների կողմից:

Փորձենք պարզաբանել, թե այդ տեսակետը որքանո՞վ է իրատեսական, արդյո՞ք հիմնավոր է այս ամբաստանությունը: Իրականությունն այն է, որ մարտի 15-ին Մ. Տամատյանն Ազգային միության և միջկուսակցական խառը ժողով է հրավիրում ու տեղեկացնում է. Բրեմոնը Սսի օրվա կառավարիչ Թայարդայի միջոցով հրաման է հեռագրել Հաճընի գայմագայմ Կ. Զալյանին, որ «պատրաստուին նահանջել կիները, մանուկները և ծերերը», ու որոնց անվտանգությունն ապահովելու համար ֆրանսիական զինվորներ կուղարկվեն, իսկ «զենք բռնող տղամարդիկ պէտք է Հաճըն մնան և զայն պաշտպանեն»: Ի պատասխան՝ Հաճընի գայմագայմը հայտնել է, որ իրենց ընտանիքներին ուղարկելուց հետո տղամարդիկ չեն ուզում մնալ «միայն քաղաքի ավերակնե-

---

[42] *Գ ա ս պ ա ր յ ա ն. 2005, 181:*

[43] *«Հաճընի ինքնապաշտպանութեան միջոցին, երկու անգամ ֆրանսական զինուորական օդանաւ կը յայտնուի երկնքին վրայ: Ա. Անգամ Մարտ 16-ին, որ նամակներու ծրար մը կը ձգէ Հաճընի հիւսիսարեւելեան ծայրամասը: Նամակներէն կը պարզուի, որ Սիսի մօտ կը կատարուի կամաւորահաւաք եւ կամաւորներու մեծ խումբ մը պատրաստ է Հաճըն օգնութեան գալու: Բ. Անգամ Մարտի 28-ին, որ Ս. Սարգիսի «օդակայանին» վրայ պտոյտ կատարելէ եւ սնտուկ մը ռուսական փամփուշտ նետելէ ետք կը հեռանայ», – գրում է Ե. Ճերեճեանը (տե՛ս Ճ ե ր ե ճ ե ա ն. 2022, 251):*

[44] *Գ ա ս պ ա ր յ ա ն. 2005, 181:*

ը պաշտպանելու համար, ուստի որոշած են ամբողջովին նահանջել»[45]: Միևնույն ժամանակ Մ. Տամատյանը մարտի 15-ին տեղի ունեցած Ազգային միության և միջկուսակցական խառը ժողովի մասնակիցներին տեղեկացնում է, որ Բրեմոնն իրեն հանձնարարել է «համոզել հաճընցիները, որ բարձրագոյն հրամանին համեմատ շարժուին»: Բրեմոնի այս հրամանի վերաբերյալ բուռն վիճաբանություն է տեղի ունենում հիշյալ ժողովում: Ի վերջո՝ մարտի 15-ին Ազգային միության ու միջկուսակցական խառը ժողովում որոշվում է հրահանգել հաճընցիներին չնահանջել և սպասել նյութական ու զինական օգնության: Այդ նույն ժողովում նաև որոշվում է՝ դրա մասին հեռագիր պետք է ուղարկվի և անպայման Սարաճյանի ստորագրությամբ՝ չիմանալով, որ Սարաճյանը մարտի 14-ին հաճընցիներին հեռագրել էր անհապաղ Սիս նահանջել: Որոշվում է, որ Պ. Սարաճյանը հեռագիր ուղարկի Հաճըն և «հրահանգ տալ, որ չնահանջեն և ամբողջութեամբ հոն մնան ...»: Սակայն Սարաճյանը հաճընցիներին հեռագրում է. «Երէկուան հեռագիրս կը հաստատեմ, կէտ առ կէտ գործադրեցէք, առանց ուրիշներուն մտիկ ընելու»: Իսկ Հաճընի հեռագրաթելը նախորդ օրը չեթեների կողմից Վահկայի և Հաճընի միջև կտրված էր, ու հեռագիրը տեղ չի հասնում[46]: Ժողովն էլ, հաշվի չառնելով Սարաճյանի կարծիքը, միասնաբար որոշում է հեռագրել Հաճըն՝ «չը նահանջել, դիմադրել և օգնութեան սպասել»[47]: Բնականաբար, պաշտոնի բերումով այն հղվում է Մ. Տամատյանի անունից և դառնում է չեթեների կողմից օղակված Հաճըն հասած վերջին հեռագիրը:

Քննարկելով խնդիրը՝ այս հարցերին քաջատեղյակ Ռ. Սահակյանը հետևություն է անում՝ Տամատյանի «այդ հեռագիրն էր, որը ողբերգական հետևանքներ ունեցավ քաղաքի 6 հազար հայ ազգաբնակչության համար»[48]: Սակայն հետո ավելացնում է. «Եթե նույնիսկ հայ կամավորներին հաջողվեր հասնել Հաճըն, կամ եթե ֆրանսիական զինվորական իշխանությունները մեծ քանակությամբ զենք և ռազմամթերք տրամադրեին հաճընցիներին, միևնույն է, վերջիններս ի վիճակի չէին լինի երկար ժամանակ կռվել քեմալական կանոնավոր զորքի դեմ, որոնց թիվն օրըստօրե բազմապատկվում էր»[49]: Առավել ևս, որ ֆրանսիական իշխանությունները թեև հայտարարում էին, որ «Հաճընը ֆրանսիական գրավման և վարչության մաս են կազմում», սակայն Կիլիկիայում վերը նշված պատճառներով ամենևին էլ մտադիր չէին զորք ուղարկել Հաճըն:

1920 թ. մարտի կեսերին Հաճընի ինքնապաշտպանության ղեկավարները վճռականորեն մերժեցին թուրքական հրամանատարության կողմից ներկայացված անձնատուր լինելու վերջնագիրը և պատրաստվեցին պաշտպանության: Ապրիլի 1-ին թուրքերը շրջապատեցին քաղաքը և անցան հարձակման, բայց հաճընցիները հերոսաբար պաշտպանվում էին: Ծանր մարտերը շարունակվեցին մինչև հուլիսի 12–13-ը, երբ թուրքական հրամանատարությունը

[45] *Մատենադարան, Ա. Ալպոյաճյանի արխիվ, թղթ. 14, վավ. 29, թ. 17:*
[46] *Մատենադարան, Ա. Ալպոյաճյանի արխիվ, թղթ. 14, վավ. 29, թ. 19:*
[47] *Մատենադարան, Ա. Ալպոյաճյանի արխիվ, թղթ. 14, վավ. 29, թ. 29:*
[48] *Սահակյան. 1970, 176:*
[49] *Սահակյան. 1970, 177:*

փորձեց բանակցությունների միջոցով ծնկի բերել հաճընցիներին, սակայն՝ ապարդյուն: Մուստաֆա Քեմալի հրամանով համալրում ստացած թուրքական զորքերը հոկտեմբերի 14-ին անցան լայնածավալ հարձակման և 15-ին գրավեցին Հաճընը, հրկիզեցին այն ու կոտորեցին 6000 հայի: Միայն 365 հոգու հաջողվեց դուրս գալ շրջապատումից: «Հաճընը ոչ ևս է». մահազդի ձևով Հաճընի անկման լուրն առաջինը հայտնեց Ադանայի «Տավրոս» թերթը 1920 թ. հոկտեմբերի 24-ին[50]*:*

Եզրակացություն

1. Առաջին աշխարհամարտից հետո մեծ թվով կիլիկիահայեր, այդ թվում՝ հաճընցիներ, ապավինելով Ֆրանսիայի հովանավորությանը, վերադարձան հայրենի օջախներ: Թուրքամետ քաղաքականություն որդեգրած Ֆրանսիան, մերձենալով քեմալականներին, լքեց Կիլիկիան, որի հետևանքով տեղի հայությունը ևս մեկ անգամ ապրեց ցեղասպանության սարսափները:

2. Դիվանագիտական խարդավանքներից անտեղյակ հաճընցիները, վստահ լինելով, որ Ֆրանսիան կօգնի, դիմեցին ինքնապաշտպանության և հերոսաբար կռվեցին: Սակայն ուժերը խիստ անհավասար էին. պարտվեցին ու սկսեցին դրա համար մեղավորներ փնտրել:

3. Ոմանք Հաճընի անկման համար մեղադրել են Մ. Տամատյանին: Սակայն վերը հիշատակված փաստերն ապացուցում են՝ դա ֆրանսիական զինվորական իշխանությունների թրքանպաստ դիրքորոշման արդյունք էր, քանի որ իր շահերից ելնելով՝ Ֆրանսիան վաճառքի էր հանել ողջ կիլիկիահայությանը: Մ. Տամատյանին մեղադրելու համար հիմք է ծառայել մարտի 14-ին չնահանջելու մասին հաճընցիներին ուղարկված հեռագիրը: Կարծում ենք, որ դա հիմնավոր չի, քանի որ. ա) հուշագիրները միշտ չէ, որ օբյեկտիվ են եղել և ճշգրիտ ներկայացրել եղելությունները: Օրինակ՝ Մ. Տամատյանի հասցեին ամենախիստ մեղադրանք (որին հենվելով՝ նույնը կրկնել են նաև մյուսները) ներկայացրած Ս. Թերզյանը հերոսամարտի մասին հուշագրել է տասնյակ տարիներ հետո և խոստովանում, որ «թեև ջանացել է հնարաւորութեան սահմանին մէջ ճշգրտօրէն նկարագրել», բայց «առանց ունենալու անհրաժեշտ օրագրութիւններ»[51]*: Հետևաբար, կարող էր նաև սխալվել: բ) Այդ չարաբաստիկ հեռագիրը, Հաճընի պատվիրակության անդամների համաձայնությամբ, ստորագրել են ոչ միայն Մ. Տամատյանը, այլև Կիլիկիայի Ազգային խորհրդի և Հաճընի Հայրենակցական միության ղեկավարները: Հետևաբար, միայն նրան մեղավոր համարելը, իհարկե, ճիշտ չէ: գ) Եթե նույնիսկ չլիներ այդ հեռագիրը, և հաճընցիները նահանջեին Սիս, ապա այդ դեպքում ևս նրանք չէին խուսափի ցավալի վախճանից և Հաճընին օգնության հասնող կամավորականների նման զոհ կգնային ճանապարհին դարանակալած թշնամիներին, քանի որ Հաճընից դեպի այլ վայրեր տանող բոլոր ճանապարհները հսկվում էին չեթեների*[52]

---

[50] Պ ո ղ ո ս ե ա ն. 1942, 718:

[51] Թ է ր զ ե ա ն. 1956, 9:

[52] Եղեռնի ժամանակ բանտերից հատուկ ազատ արձակած հանցագործների հրոսակախմբեր՝ հայերին կոտորելու համար, ելուզակ, ոճրագործ, ավազակ, այս դեպքում՝ քեմալական անկանոն ուժեր:

կողմից: Դրա մասին է վկայում այն իրողությունը[53], 40 բեռ զինամթերքը, որ ֆրանսիացիները խոստանում էին Սսում տրամադրել հայ կամավորներին, մարտի 10-ին ամբողջությամբ ընկավ չեթեների ձեռքը[54]: Իսկ եթե լավ զինված ու քաջաբար կռված 80-ից միայն 18–20 հոգու վիրավոր և ամբողջ զինամթերքը կորցրած վիճակում էր հաջողվել հասնել քաղաք, ապա ոչ այնքան լավ զինված ու մեծաքանակ անզեն բնակչության առկայության դեպքում պատկերն ավելի ողբերգական կլիներ: դ) Իր անտիպ հուշերում Պ. Սարաճյանը նահանջի մասին երկրորդ հեռագրի որևէ տեքստ չի հիշատակում, դա անում են այլ հուշագիրներ և տարբեր տեքստեր են ներկայացնում: Ակամա հարց է առաջանում. ինչու՞, ինչպե՞ս կարող էր հեռագրի հեղինակը որևէ տեքստ չներկայացներ և ինքն իրեն արդարացներ, բայց դա անում են ուրիշները: Հարց, որը ցայսօր բոլորի մոտ անպատասխան է մնացել:

4. Հաճընի ողբերգության համար մեղավորներ պետք չէ փնտրել. հարկավոր է տարիներ անց գոնե սթափ գնահատել ստեղծված իրավիճակը, օբյեկտիվ հետևություններ կատարել և դրանցից դասեր քաղել: Այն փաստը, որ մարտի 14-ին Է. Բրեմոնը, Պ. Սարաճյանին և Մ. Տամատյանին հրավիրելով, պարզորոշ ներկայացրել է իրենց դիրքը՝ «ապարդիւն է դժուարին լեռներով Հաճընին օգնութիւն ուղարկել. այդ մասին խորհել անգամ աւելորդ է»[55], արդեն խոսում է անխուսափելի վախճանի մասին: Հասկանալի է՝ որևէ հեռագիր ոչինչ չէր կարող փոխել:

5. Ազատագրական պայքարի նվիրյալ Մ. Տամատյանը զենքը ձեռքին մարտնչելով, Մուշի ու Սասունի գյուղերը շրջելով ու քարոզչություն կատարելով, ինչպես նաև գրչով ու դիվանագիտական ազգօգուտ ծառայություններով ողջ գիտակցական կյանքը նվիրաբերել է իր ժողովրդին: Դրա դրսևորումը եղավ նաև այն, որ այլ ելք չտեսնելով՝ 1920 թ. օգոստոսի 4-ին նա համախոհների հետ Ադանայում Ֆրանսիայի հովանավորությամբ Ինքնավար Հանրապետություն հռչակեց: Սակայն թուրքամետ ֆրանսիական զինվորականներն ուժով ցրեցին այն: Ֆրանսիացիների «ասպետական» այդ կեցվածքից հիասթափված՝ Տամատյանը հեռացավ Կիլիկիայից: Մինչև վերջին շունչը իր ժողովրդին նվիրաբերած գործչի հասցեին հանիրավի մեղադրանքներ հնչեցնելը, մեղմ ասած, շնորհակալ գործ չէ և սերունդներ դաստիարակելուն վնասակար: Ուստի ժամանակն է հրաժարվել ոչ գիտական մոտեցումներից և ցանկացած հարց լուսաբանել պատմականության և օբյեկտիվ տեսանկյունից:

6. Հաճընի հերոսամարտն, անկասկած, թուրքական ջարդարարների դեմ հայ ժողովրդի մղած պայքարի հերոսական էջերից է և ուսանելի շատ կողմեր ունի:

Սուրեն Սարգսյան – պ. գ. դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նոր պատմության բաժնի առաջատար գիտաշխատող: Գիտական հետաքրքրութ-

[53] *Այդ մասին վկայում են մեր կողմից հիշատակված բոլոր հուշագիրները և ուսումնասիրողները (Թ է ր զ ե ա ն. 1956, Գ ա ս պ ա ր յ ա ն. 2005, Ս ա հ ա կ յ ա ն. 1970 և այլն):*

[54] *ՀԱԱ, ֆ. 408, ց. 1, գ. 124, թ. 1–2:*

[55] *Մատենադարան, Ա. Ալպոյաճյանի արխիվ, թղթ. 14, վավ. 29, թ. 14:*

յունները՝ հայ ավանդական կուսակցություններ, ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսություն, հայ պարբերական մամուլ, ազատագրական պայքարի նվիրյալներ: Հեղինակ է 8 մենագրության և ավելի քան 150 հոդվածի: sargsyansuren@yandex.ru

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Արամ Ասպետ. 1961, Դրուագներ Հաճընոյ հերոսամարտէն, Պէյրութ, 242 էջ:

Արզումանյան Մ. 1973, Արհավիրքից վերածնունդ, Երևան, «Հայաստան», 580 էջ:

«Արեւ» (Կահիրե), 24. VIII.1951:

Գասպարյան Ռ. 2005, Հայկական կոտորածները Կիլիկիայում, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 246 էջ:

Թէրզեան Յ. Սոկրատ. 1956, Հաճընի ութամսեայ դիւցազնամարտը, Բ. տպագրութիւն, Պուէնոս Այրէս, տպարան «Արարատ», 702 էջ:

Իզմիրլեան Կ. 1964, Հայ ժողովուրդի քաղաքական ճակատագիրը անցեալին և ներկայիս (քննական տեսութիւն), Պէյրութ, 314 էջ:

Կառվարենց Գ. 1922, Ամբողջ ինն ամիս պայքար անմոռաց…, Կ. Պոլիս, 67 էջ:

«Կիլիկիա» (Ադանա), 03. VI. 1919, 15 VI. 1919:

Հայոց պատմություն. 2010, հ. IV, գիրք առաջին. Նորագույն ժամանակաշրջան (1918–1945 թթ.), Երևան, «Զանգակ-97» հրատ., 797 էջ:

Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 200, g. 1, գ. 546, թ. 17–19, ֆ. 408, g. 1, գ. 142, թ. 13, գ. 124, թ. 1–2, ֆ. 430, g. 1, գ. 295, թ. 21–29, g. 1, գ. 807, թ. 1–3, g, 1, գ. 340, թ. 1–2, g, 1, գ. 817, թ. 19–39:

Ճերեճեան Ե. 2022, Հաճընի ինքնապաշտպանական կռուիներուն մասին. – ՊԲՀ, № 1, էջ 248–256:

Մատենադարան, Ալպոյաճյանի արխիվ, թղթ. 14, 29, թ. 2 (Հաճընի առաջնորդ Պետրոս Սարաճյանի անտիպ հուշերը «Հաճընը ինչու նահանջեց և ընկավ»), թ. 12–13, թ. 14, թ. 15, թ. 16, թ. 17, թ. 19:

Մանջյան Հ. 1991, Հաճընի հերոսական ինքնապաշտպանությունը 1920 թվականին, Երևան, «Նարեկացի» հրատ., 95 էջ:

Նաթանեան Մ. 1990, Արմենական կուսակցութիւն, ծագումէն սկսեալ մինչև Սահմանադրական Ռամկավար կուսակցութեան կազմութիւնը, Գահիրէ, 106 էջ:

«Նոր Հաճընն» (Ադանա), 1966, թիվ 10:

Յափուճեան Ա. 1977, Հայ ժողովրդին անկախութեան պայքարը Կիլիկիոյ մէջ 1919–1921 թթ., Գահիրէ, մատենաշար Հայ ազգային հիմնադրամի, 1086 էջ:

Յուշամատեան Մեծ Եղեռնի (1915–1965). 1965, պատրաստեց Գերսամ Ահարոնեան, Պէյրութ, 1100 էջ:

Շխրտմեան Մ. 1974, Մոռացուած դէպքեր եւ դէմքեր Հաճընոյ 1920-ի հերոսամարտին, Նիկոսիա, 121 էջ:

Պօղոսեան Յ. 1942, Հաճընի ընդհանուր պատմութիւնը և շրջակայ Գօզան Տաղի հայ գիւղերը, Լոս Անճէլըս, 652 էջ:

Սեպուհ Մ. 1960, Հաճընի ողբերգութիւնը, Հալեպ, տպարան «Անի», 219 էջ:

Սահակյան Ռ. 1970, Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1919–1921 թթ., Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 325 էջ:

Սաֆրաստյան Ռ. 2019, Մուսթաֆա Քեմալ. պայքար Հայաստանի Հանրապետության դեմ (1919–1921 թթ.), Երևան, «ՏԻՐ» հրատ., 140 էջ:

Боев Ю. А. 1964, Ближний Восток во внешней политике Франции 1898–1914.– Очерки истории дипломатической борьбы Франции за Ближний Восток. Киев, «Наука думка», 336 с.

Ллойд Джордж. 1957, Правда о мирных договорах, т. II. М., Изд-во иностранной литературы, 560 с.

Кемаль-Ататюрк Мустафа. 1929, Путь новой Турции, 1919–1927. Первые шаги национально-освободительного движения, 1919, т. 1. М., Литиздат HKUD, 480 с.

«Новый Восток» (М.), 1923, № 3.

Materne M. Le massacrf de Marache (Fevrier 1920), Extralt du «Flambeau», revue belge des questions politiques et litteraires, 4 e annee, № 1, janvier 1921.

ГЕРОИЧЕСКАЯ БИТВА АЧНА: ПРИЧИНЫ ПОРАЖЕНИЯ И ВОПРОС ОТВЕТСТВЕННОСТИ

СУРЕН САРГСЯН

Резюме

Ключвые слова: Киликия, Ачн, героическая битва, автономия, экономические интересы, самооборона, поражение, французская военная власть.

После Мудросского перемирия (30 октября 1918 г.), поверив обещаниям французских властей, спасшиеся от Геноцида армяне Киликии вернулись в места своего проживания и начали обустройство родных очагов. Пользуясь существующими противоречиями между великими державами, оставшиеся у власти турецкие правители в основном поддержали Кемаля-пашу, осуществившего переворот в Турции и приступившего к восстановлению страны, и, как прежде, «по-турецки» впряглись в дело деармонизации армянонаселенной Киликии.

С апреля по октябрь 1920 года городу Ачн удавалось героически сопротивляться, но силы были крайне неравны, и защитники Ачна потерпели поражение. Некоторые исследователи несправедливо обвинили в трагедии Ачна преданного борца армянского национально-освободительного движения М. Таматяна. Однако это не имеет ничего общего с реальностью.

Сурен Саргсян – д. и. н., проф., ведущий научный сотрудник отдела новой истории Института истории НАН РА. Научные интересы: армянские традиционные партии, идеология национально-освободительной борьбы, армянская периодическая печать, подвижники освободительной борьбы. Автор 8 монографий и более 150 статей. sargsyansuren@yandex.ru

THE HEROIC BATTLE OF HACHIN: THE CAUSES OF DEFEAT AND THE QUESTION OF RESPONSIBILITY

SUREN SARGSYAN

S u m m a r y

Key words: Cilicia, Hachin, heroic battle, autonomy, economic interests, self-defense, defeat, French military power.

After the Truce of Mudros (October 30, 1918), believing the promises of the French authorities, the Armenians of Cilicia who had escaped the Genocide returned to their places of residence and devoted themselves to the task of settling their homes. Taking advantage of the contradictions between the Great Powers, the Turkish rulers who basically remained in power mainly supported Kemal Pasha who carried out a coup in Turkey and began to rebuild the country, and as before, was in "Turkish way" engaged in the de-Armenization of the Armenian-populated Cilicia.

In 1920, from April to October, the city of Hachin managed to heroically resist, but the forces were extremely unequal, and the defenders of Hachin were defeated. Some researchers unfairly blamed the devoted fighter of the Armenian national liberation movement M. Tamatyan for the tragedy of Hachin. However, this has nothing to do with reality.

Suren Sargsyan – Doctor of Sciences in History, Professor. Leading Researcher at the Department of New History of the NAS RA Institute of History. Scientific interests: Armenian traditional parties, ideology of the national liberation struggle, Armenian periodical press, devotees of the liberation struggle. Author of 8 monographs and over 150 articles. sargsyansuren@yandex.ru